ցիկ։ Իսկ նոքա իրրեւ լուան, ափշեցան և զահի հարան։ Յայտնի տեսանելով՝ թէ որպիսի պատակտումն հանդերձեալ էր լինիլ 'ի մէջ ազգին, եւ պատառումն անկարկատելի, մանաւանդ զի գիտէին՝ թէ հաւան է բովանդակ ազգն ընդ Յակոբ Կաթուղիկոս Էջմիածնի, և սիրով կապեալ ընդ նմա վասն բարեբաւութեան նորա, եւ չէր ուրուք գտեալ 'ի նմա արատս ինչ, վասն որոյ բազում աղաչանօք հաւանեցուցին զՄաչատուր մի վաղվաղել, զի թերեւս գտցեն հնարս ինչ։ և մեք ասեն, առաքեմք զոք յառաջագոյն քան զքեզ, երթալ և խօսիլ 'ի դիմաց մեր ընդ Եղիազարու, զի դադարեսցի յայնպիսի խորհրդոց։ Եւ քանզի գրեալ էր Եղիազար առ Յովսէփ վարդապետ, զոր եթող իբր փոխանորդ իւր 'ի Կոստանդինուպօլիս՝ զի յղեսցէ առ ինքն զԵրեմիա Զելէպի՝ վասն լինելոյ նորա յաջողակ 'ի գիր և 'ի բան, զնա ինքն զԵրեմիա յղեցին պատգամաւոր առ Եղիազար՝ զի թերեւս կարասցէ նա իմաստութեամբ իւրով փոխել զմիտս նորա։

Հասեալ Երեմիայ 'ի Բերիա՝ յանդիման եղեւ Եղիազարու, և խօսեցաւ ընդ նմա բազում ինչ 'ի բազում աւուրս՝ այլ ոչինչ օգտեցաւ։ քանզի ասէր Եղիազար՝ իմ առեալէ Արքունի հրովարտակ յԵպարքոսէ վասն Կաթուղիկոսութեան, ապա զի՞ ես ընդունայն աշխատիք նանրացուցանել զայն, և սկսաւ առաջի դնել նորա թէ 'ի նստիլ իմում յԱթոռ Հայրապետութեան, ակն ունիմ բազում օգուտ ցուցանել եւ առնել ազգիս Հայոց շինութեամբք և կարգաւորութեամբք, և չառնուլ բնաւ նուէրս 'ի ժողովրդենէ։ Եւ Երեմիա Զելէպի անյոյս լեալ 'ի փոխելոյ զմիտս նորա՝ ծանոյց գրով 'ի Կոստանդինուպօլիս։ Իսկ Եղիազար յետ ժամանակաց զայս Պերաթ Կաթուղիկոսական տարաւ ընդ իւր յԷջմիածին, և զկնի մահուան նորին, Սիմէոն Կաթուղիկոս Երեւանցի արկեալ 'ի հուր այրեաց՝ զի գրեալ էր 'ի նմա զանունդ Երուսաղէմ։ Տե՛ս 'ի Գէորգ Զ՚մբը կոչեցեալ, պատմագրէ Էջմիածնի, Երես 239։

Յետ սակաւուց եկն և Խաչատուր Կաթուղիկոս Սսոյ 'ի Կոստանդինուպօլսոյ 'ի Բերիա, և անդ վերստին խորհեալ ընդ Եղիազարու եւ տեսեալ 'ի ձեռին նորա զԱրքունի հրովարտակ՝ զիջաւ կամաց նորա, և ձեռնադրեալ